ՎՃՌԵՑ

1. «Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 26.12.2023 թվականի թիվ 4319-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի՝ «Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերությանը և «Նեմրութ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 26.12.2023 թվականին կայացված թիվ 4319-Ա որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես «Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարկվելու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**